Պետական Վերահսկողութեան ընդհանուր կանոնների մասին. —

Ի վոլոխոմն, լրացումն ու վերացումն գործող օրէնքների սահմանել՝

1) *Պետական Վերահսկողութիւնը Պարլամենտի օրգանն է: Պետական Վերահսկիչը պատասխանատու է միայն Պարլամենտի առաջ:*

2) *Պետական Վերահսկիչը իր գործառնութիւնների և իրաւասութեան շրջանում անկախ է և գործում է Վերահսկողութեան կանոնադրքի համաձայն, օգտւելով միաժամանակ Նախարարներին հաւասար իրաւունքներով, բայց չմտնելով կառավարութեան կազմի մէջ:*

3) *Պետական եւմտից և ընդհանուր միջոցների պահպանման հարցերում Վերահսկիչը պարտական է հսկել կառավարչական հիմնարկութիւնների բոլոր գործողութիւններն ու հաշիւները օրինականութեան և կանոնաւորութեան տեսակէտից:*

4) *Պետական Վերահսկողութեան պահանջները, որ բղխում են նրա իրաւասութիւնից, պարտադիր են պետական բոլոր հիմնարկութիւնների ու պաշտօնեաների համար:*

5) *Պետական Վերահսկողութիւնը՝ — ա. իր եզրակացութիւնն է տալիս Պարլամենտի հաստատութեան ներկայացւող բոլոր նախահաշիւների, պետական եւմտից հաշւեցոյցի, նախահաշւից դուրս պահանջւող լրացուցիչ ու արտակարգ վարկերի և ընդհանրապէս ամէն ձեւի ու տեսակի դանձարանային վճարումների վերա. բ. քննում է կառավարութեան գործողութիւնները պետական մուտքի դանձման ու ծախքերի կատարման օրինականութեան և Պարլամենտի որոշումներին համապատասխան լինելու տեսակէտից. գ. տալիս է իր եզրակացութիւնը կառավարչական իշխանութեան տնտեսական գործառնութիւնների և ձեռնարկութիւնների նպատակայարմարութեան և տնտեսականութեան մասին. դ. ստուգում է իրեն հաշւետու բոլոր հիմնարկութիւնների տրամադրութեան տակ եղած դրամական և ընդհանրապէս նիւթական միջոցների, ինչպէս և կառուցումների ու այլ գործողութիւնների հաշիւները. ե. հսկում է վարկերի ստորաբացումների և փոխանցումների կանոնաւորութեան վերա դանձարաններում ըստ բիւջետային ստորաբաժանումների. զ. միջոցներ է առաջարկում պետական հաշւապահութեան և հաշւետւութեան կանոններն ու ձեւերը կատարելագործելու համար:*

6) *Յօդւած 5-ում յիշատակւած գործառնութիւնները իրագործելու համար՝ Պետական Վերահսկիչը մտցնում է նախնական, յետագայ և փաստական քննութիւններ:*

7) *Կառավարութիւնը ներկայացնելով Պարլամենտին ֆինանսա-տնտեսական բնոյթ կրող օրինագծեր ու առաջարկութիւններ՝ պարտաւոր է միաժամանակ դրանց պատճէնները բոլոր յաւելւածներով հանդերձ՝ —ուղարկել միաժամանակ նաև Պետական Վերահսկողութեան:*

Ծանօթ. Պարլամենտի և Պետական Վերահսկողութեան նախահաշիւներն ու հաշիւները ենթարկւում են անմիջապէս Պարլամենտի յանձնաժողովի վերաքննութեան:

8) *Պետական Վերահսկիչը՝ բացի նախնական վերաքննութեան կանոններով սահմանւած լիազօրութիւններից՝ միաժամանակ իրաւունք ունի արգելել դանձարանային վճարումներ կատարել, ֆինանսա-տնտեսական բնոյթ կրող պայմանագրեր կնքել և համաձայնութիւններ կապել, եթէ նկատի բացայայտ ապօրինութիւն և վնասակարութիւն՝ պետական չահերի տեսակէտից:*

Ծանօթ. Սոյն յօդւածում նախատեսնւած դէպքերում՝ համապատասխան Նախարարը վիճելի խնդիրը կարող է մտցնել Նախարարների Խորհուրդը, որի որոշումը համարւելու է վերջնական: